««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի N 1 հավելվածում՝

1) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ	1

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ	1

».

2) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ	12

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի տեղակալ	12

».

3) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ	10

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ	10

».

4) «

Անկախ պետական մարմնի նախագահ	1

» տողը ուժը կորցրած ճանաչել.

5) «

Անկախ պետական մարմնի նախագահի տեղակալ	8

» տողը ուժը կորցրած ճանաչել.

6) «

Անկախ պետական մարմնի անդամ	7

» տողը ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։